«Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստր ձևավորող և վարող իրավասու մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

„___ „ _____ 2020 թվականի N ___ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐԻ ՌԵԵՍՏՐ ՁԵՎԱՎՈՐՈՂ ԵՎ ՎԱՐՈՂ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 6-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1.Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստր ձևավորող և վարող իրավասու մարմին ճանաչել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը։

2. Հանձնարարել՝

1) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեքամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի հետ համատեղ՝ արդյունաբերական ոլորտի ներկայացուցիչների մասնակցությամբ հաշվառել արդյունաբերական կազմակերպություններում առկա քիմիական նյութերը և խառնուրդները, որոնք գտնվում են շրջանառության մեջ կամ նախատեսվում է շրջանառության մեջ դնել Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում,

2) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնել 2015-2020 թվականների կտրվածքով Հայաստանի Հանրապետություն ներմուծված և Հայաստանի Հանրապետությունից արտահանված քիմիական նյութերի և խառնուրդների վերաբերյալ տեղեկատվություն,

3) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝ քիմիական նյութերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կոնվենցիաների իրականացմանն ուղղված ֆինանսական մեխանիզմների միջոցով տեխնիկական և ֆինանսական աջակցություն հայցել Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ստեղծման համար։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: